

ՏԱՍՆ ԵՒ ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանկուր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՎԱՅ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպագանդայով: Մեր կը ստանանք սեփական
ՀԵՌԱՅԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿԻ» կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թամարիայի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿԻ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով: ТИФЛИСЪ, Редакция газеты «Мшакъ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Բաղմալէպ» եռամսեայ հանդիսի մի յօդուած.
— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գրեթէ առատորէր Ան-
դրկովկասում. Հայոց թաղութ. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ձիւնորական օրինազիծը
Գերմանիայում. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԾԵՄԵՐ:

„ԲԱՅՄԱՎԷՊ“ ԵՆԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍԻ ՄԻ
ՅՕԴՈՒԱԾ

Ստացանք վեցերորդ «Հրատարակող»
«Բաղմալէպ» եռամսեայ հանդիսի յօդուած-
ընտան-սեպտեմբեր ամսաների տետրակը:
Այդ տետրակի մէջ, ի միջի պայտ կայ և մի
յօդուած «Մշակի» դէմ հետեւեալ վերնա-
գրով. «Բացատրութիւն մի հայկական տա-
ռուհու հնչման և գրութեան մասին առ-
մեծ. խմբագիր «Մշակ» լրագրի»:

Այդ յօդուածում, որ բաւական հակա-
սական է իր բովանդակութեամբ և որին
նրա հեղինակը, Հայր Աթոռնոս Տիրոջան
ջանում է ուսումնական անկողնից հան-
կերպարանք տալ, Միթիթարեանները պա-
տասխանում են թէ մեր առաջնորդող յօ-

դուածին, որ տպւած էր «Մշակի» այս
տարվայ 69-որդ համարում, և թէ մեր
աշխատակից Առաքել Մարութեաննցի յօ-
դուածին, որ տպւած էր «Մշակի» № 140-ի
մէջ:

Յօդուածի ընդհանուր միտքն այն է որ
Թիֆլիսի հայերը և Միթիթարեանները
չեն աղաւաղել Հայոց այբբենարանն ու
Հայոց լեզուի տառագրութիւնը, բայց նը-
րանց այդ տարօրինակ տառագրութիւնը
առաջացել է պատմական պատճառնե-
րից...

Մենք հրաժարվում ենք ընդունել այդ
միտքը, որպէս լոգիկական ապացոյց, որով
կարելի լինէր արդարացիել որ և է պատ-
մական սխալներ: Միթէ ամեն բան ինչ որ
պատմական է, պէտք է ընդունվի որպէս
անսխալական, միթէ պատմութիւնը սխալ-
ներն չէ գործում, միթէ մարդկութիւնը
անսխալելի սխալներ չէ գործում իր պատ-
մական ընթացքում:

Ի հարկէ, ամեն բան իր պատմական
պատճառներ ունի. բայց այդ չէ նշանա-
կում որ պատմութեան մէջ արած սխալի
և վնասակար քայլի դէմ մարդիկ չը պէտք
է բողբոջեն և չը պէտք է ջանան ուղղել
մի անգամ արած սխալները...

Դա էլ պատմական պատճառներ ունի

որ հայերը դարերի ընթացքում թողնում
են իրանց հայրենիքը և ցրվում են աշ-
խարհի չորս կողմը, օտարանում են ի-
րանց մայրենի երկրից, դա էլ իր պատմա-
կան պատճառներ ունի, որ այլ և այլ օ-
տար վայրերի ազգերի մօնաբոյնի, պար-
սիկների, տաճիկների ազդեցութեան տակ
հայերը անբարոյականացել են, դա էլ իր
պատմական պատճառներ ունի որ հայերը
հետզհետէ կրօնաւոր են լինում, դա էլ
իր պատմական պատճառներ ունի որ ի-
րանց Միթիթարեանները կաթօրիկ կրօն են
ընդունել, դա էլ իր պատմական պատճառ-
ներ ունի որ Միթիթարեանները, կարված
լինելով իրանց հայրենիքից, կղզիացած լի-
նելով Հայաստան երկրից, դարերի ընթաց-
քում հետզհետէ մոռացել են թէ ինչպէս
են արտասանվում Հայոց տառերը, կողքի
են Հայոց տառերի ճիշդ հնչման յիշողու-
թիւնը և այժմ խօսելու ժամանակ ձ. չ. ջ.
ջ. տառերը կատարելապէս միակերպ են
արտասանում, կամ ձ. ծ. և ց. տառերի
արտասանութեան մէջ ոչինչ զանազանու-
թիւն չեն տեսնում:

«Բաղմալէպի» ուսումնական յօդուածի
վերջում գտնում ենք հետեւեալ խորամիտ
եղբայրացութիւնը, որ Միթիթարեան հայրե-
րի կարծիքով երեւի, խոր ուսումնական
հետազոտութեան արգասիք է, իսկ մեր
կարծիքով մի ֆրակա է, որ ոչինչ չէ ա-
պացուցանում Ահա այդ եղբայրացութիւ-
նը:

«Ա. այժմ մենք մեր վերը մէջ բերած
կարծիքը պարզած կը համարենք, այսին-
քէն է Ռուսահայոց հնչումն ընտրե-
լազայն է, քան զհայերէն հայոցն, ըստ
որում համաձայն է հայերէն տառից շա-
րակարգին, բաղադրութեամբ յոյն ալֆա-
բետաց և հնչման տառից հնչեալութեան
քոյրաթիւ լեզուաց, բայց և ճաշկանհայոց
հնչումն օտար համարել է հայկական
սեփական արտասանութեան է անտեղի»:

Տեսնում էք, ընթերցող, որքան խոր ու-
սումնական անկողնապահութիւն: Այդ
եղբայրացութիւնը այնքան պարզ է և հա-
մազիչ, որ հայր Տիրոջաննցին մտնում էր մի-
այն ինքնահաւանութեամբ աւարտել իր
խօսքերը ֆրանսիական յայտնի բացական-
չութեամբ. «et voilà messieurs!»

Յաւալին այն է միայն, որ այդ խօսքերը
ոչինչ չեն ապացուցանում և դրանցից ո-
չինչ չէ հասկացվում...

Եթէ ուսումնական հայր սուրբը այդքան
երկար ուսումնական հերքում մեզ նուի-
րելուց յետոյ, վերջ ի վերջոյ խոստովան-
վում է թէ բարբառներից մէկի, այն է
ուսահայերի հնչումները ընտրեալա-
գոյն են, ուրեմն ի՞նչ հիման վրա միւս
բարբառի, այն է թիւրքահայոց հնչում-
ները հայկական արտասանութիւնից օտար
համարել անտեղի է զանում...

Եկէք ու հասկացէք...

Բայց այդտեղ մի ուրիշ գործնական խն-
դիր էլ կայ. այնքան միամիտ չեն Միթի-
թարեան հայերը: Եթէ մի օր նրանք ան-
զուշուրիւն արած լինէին խոստովանվու-
անցեալում իրանց արած սխալը, եթէ մի օր
ձանաչէին իրանց հայերէն տառագրութիւնը
սխալ անձոնի և օտար հայոց հնչում
ներին և հայոց լեզուի արտասանութեան,
—այն ժամանակ նրանք ի՞նչ պիտի անէին
իրանց տպարանում տպւած և դրադարա-
նում ծախելու համար անգամ աշխարհա-
բար լեզուով ահագին քանակութեամբ այլ
և այլ հրատարակութիւնների հետ: Խոս-
տովանվելով որ իրանց տառագրութիւնը
սխալ էր, նրանց կը մնար հերքել իրանց
ամբողջ անցեալը հայոց աշխարհա-
բար լեզուի մշակութեան վերաբերմամբ,
նրանց կը մնար միայն քաջութիւն ունենալ
Ս. Ղազարի վանքի տպարանից լոյս ընծա-
յած բոլոր աշխարհաբար հրատարակու-
թիւնները մէկ անգամից Արքիական ծովը
նետելու... Իսկ դա, ի հարկէ, ձեռնտու չէ...

Նոյնը ստիպւած կը լինէին անել և Կ.
Պօլսի դրագմաները, խոստովանվելով որ
դարերի ընթացքում աղաւաղելով հայոց
լեզուի հնչումները՝ ջուր մաղելով էին
դրագմում և այժմ նրանց մտնում է միայն
Բօսֆօրի մէջ նետել և ամար թիւի, Վիւթ-
թօր չիւր և Վիւթթօր, Ալէքսանդր Թիւրքի
և այլոց թարգմանութիւնների ահագին
քանակութիւնը... Արեւմտ թէ Միթիթա-
րեանները և թէ Կ. Պօլսի դրագմաները
պէտք գրվելին նշանաւոր եկամուտներից,
ստիպւած լինելով իրանց ամբողջ դրական
անցեալը հերքելու... Իսկ դա, ի հարկէ,
ձեռնտու չէր լինի թէ Միթիթարեանների և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱՅՐԵՐ

Ա.

ՄԱՅՐԸ

Գիշեր է թէ ցերեկ:
Այդ չէ կարողանում խմանալ Շուշի քաղաքի
մի առանձնացած անկիւնում տեղաւորված փոք-
րիկ տան բնակչո՛ւն: Միակ լուսամուտը, որ
պիտի պատասխանէր այդ հարցին, ծածկված է
մի հին կապիւրի կտորով, սակայն չը նայած դը-
րան, ցուրտ քամին անարգել ներս է մտնում:
Թրճիկ դուռը թէ և կողպած է, բայց նրա և պա-
տի մէջ մնացել է մի լայն ճեղք, ուսկից երևում
է դրանը կուտած ձիւնը:

Գիշեր է թէ ցերեկ...

Եւ անկողնի մէջ նստած կինը շատ է ուշում
խմանալ այդ մի երկար մութ գիշերը նրան շատ
էր տանջել, և նա անհամբեր սպասում էր լուսա-
բացին, թէ և բացվող օրը ոչ ցրտի մեղմութիւն
էր խոստանում, ոչ էլ նրա սրտին մի սփոփանք:
Բայց ինչպէս և լինի, լոյսը խաւարից չառ լաւ է,
այդ դիմէ նա: Աստուծու բարի օրը բոլորու-
վին նման չէ ծանր գիշերին: Կինը մի անգամ էլ
նայեց դրան ձեռքին, խորը հառաչեց: Հառաչան-
քն էլ չէր հանգստացնում նրան, որովհետեւ մի
շատ սովորական բան էր նրա համար:
Հետզհետէ դրսի լոյսից խաւարը նոսրանում:

Եր. խրճիկ ներսը հետզհետէ աչքին տեսանելի էր
դառնում, թէ և ոչ այնքան որոշ դժգոհութիւն: Եւ
այդ կիսամթութեան մէջ երևաց մի փոքրիկ աղ-
ջկալ գլուխը. մնացած մարմինը խրճած էր քուր-
սու տակ: Երեւան քնած էր: Եւ այնքան ծանր
էր այդ քուրսը, որ մայրը նրա ճնշուածութեանը եր-
կար ակնով դնելուց յետոյ մի քանի անգամ
ձեռքը դրաւ նրա ճակատին ու բերանին, երկի
ուղեւորով համոզվել թէ իսկ որ նա կենդանի
էր:

— Չը լինի թէ անուշադր դիպած լինի, խօսեց
ինքն իրան կինը. դեռ որ ժամանակն էր երբ Ե-
րեւան վերկացաւ և կրակ արաւ... Ածուխից ո-
չինչ չէ մնացել... փոշի միայն... հոսն ու փոշին
երեւելիս վնասել են...

Նա մի անգամ էլ չօշափեց քնած երեխայի
դէմքը և էլի ակնով դրաւ ճնշուածութեանը: Քու-
րսը այդ, անհամբեր էր. կարծես մի ծանր բան
խեղդում էր խեղճ երեխային: Մայրը նայեց և ա-
պա թուլացած ընկաւ անկողնի մէջ, մի երկար
ու ծանր ակն հանելով իր կրծքից:

Այդպէս երկար կը մնար նա անշարժ. փակ
աչքերով ինքն իրան մոռացած ընկնելը շատ
էր թեթեւացնում մարդուն: Բայց նրա ձայն կողքից
լավեցաւ. նորածին երեխայի ճիչը, որին հետեւեց
սաստիկ լացը: Մայրը կրկին վերկացաւ, հանեց
չորերի տակից մանուկին, կրծքին կպցրեց: Լացը
հանդարտվեց. մանուկը գտաւ իր ուղածը:

Երեկ առաւօտն էր ծնվել այդ փոքրիկ արարա-
ծը: Եւ նրա մայրը դեռ գտնվում էր ծննդական
ցաւերի մէջ: Ոչինչ կը լինէր այդ ցաւը, եթէ նա
հանգիստ լինէր: Բայց ուր էր հանգստութիւնը:

Նա վաղուց էր կորել, այն ժամանակից ի վեր,
երբ տան տղամարդը դուրս էր եկել տան չէմ-
քից: Վեց ամիս է ահա, որ այդ մարդը գնացել
է, և գնալիս որքան յոյսեր է տուել իր սիրելի
ամուսնուն, իր անմոռաց Մարիամին: Կը գնամ,
ասում էր նա, երկար չեմ սպասել տայ քեզ. ա-
մեն բան կարգի կը դնեմ, փող կաշխատեմ, քեզ
էլ կուղարկեմ, ինքն էլ չուտով յետ կը դառնամ:
Մի տարին այնքան մեծ ժամանակ չէ: Միշտ
տանը նստելով բան չի դառնալ. ուրիշները մեզ
համար չեն գնում և մեզ համար չեն փող բե-
րում: Մարիամը չէ մոռացել այդ խօսքերը:
Ինչպէս մոռանալ: Եթէ մոռանալ, էլ ինչով ապ-
րել: Բայց... Բայց ինչու նա խաբեց, նրա այդ
խօսքերից և ոչ մէկը ճշմարիտ չեղաւ: Եւ Մարիա-
մը աշխատում է զանազան պատճառներ: Ինչպէս
գտնել: Նա շատ գիտէ թէ ուր է նա, այդ խօս-
քերի յուսով օտարութիւն գնացածը: Վեց ամի-
սայ ընթացքում միայն մի նամակ է ստացել և
մի քանի րուբլի փող: Գնաւ ո՞վ գիտէ, ուր է նա,
ինչ է պատահել նրան... Ամբողջ գիշերը դրա
մասին էր մտածում խեղճը. խաւար ու ցուրտ
խրճիկում նրա երեւակայութեան առաջ պտոյտ
էին դալիս հազար ու մի սարսափելի մտքեր. նա
վախում էր, դողում էր ամբողջ մարմնով: Նա աշ-
խատում էր չը մտածել, հեռու վանել իրանից այդ
սոսկալի մտքերը: Բայց մոռանալ չէ լինում: Միթէ
կարելի էր մոռանալ որ ինքը մի մայր էր, որ դեռ
նոր էր աշխարհ հանել մի փոքրիկ արարած: Իսկ
այն մէկը: Երկու երեխայ, երկուսն էլ մի ակաթի-
սարսափելի բան. սարսափելի մանաւանդ տար-
վայ այս ժամանակին, այս սենյակի մէջ:

— Բարեբա՛ր Աստուծո՛ւ... հառաչեց դժբախտ
մայրը և պոկ տալով իր ծծելից նորածին մանու-
կին, դրեց վերմակի տակ:

Եւ ինքը կրկին անշարժացաւ Կրկին էլի սկսեց
տանջել նրան մի և նոյն հարցը՝ գիշեր է արդե՞ր
թէ ցերեկ: Դրան ձեռքը չարունակ նոյն կերպով
ցոյց է տալիս ձիւնի կոյտը, բայց լոյսը նկատե-
լի է, հետզհետէ շատանում է իսկ ահա քամին
յետ գցեց հին կապիւրի կտորը, փոքրիկ լուսա-
մուտը բաց մնաց. ձիւնի փոշին ներս է թափ-
վում: Եւ այնու ամենայնիւ Մարիամը չէ կարողա-
նում տեղից կանգնել, ծածկել լուսամուտը: Ո՞ր-
տեղից է մնացել ոյժ: Նա մի կմայր է դարձել.
դէմքը ընդունել է դեղին հողի գոյն, աչքերը խո-
րն են ընկել, չը ջապատվել են կապոյտ չըմանալ-
ներով. այտերի ոսկորները դուրս են ցցվել: Նը-
րեմն նա դարձնում է իր աչքերը դէպի լուսամու-
տը, և որքան անօգնական է իսկ ահա ու յուսահատ
նրա հայացքը: Կարծես լաց է լինում, բայց աչ-
քերը չոր են: Դրսի ցուրտը մի րոպեում կապտա-
ցրեց նրա սուր քիթն ու չրթուքները. նա աշ-
խատում է կուշ գալ, բոլոր անդամների ջերմու-
թիւնը մի տեղ ժողովել: Իդուր աշխատանքը,
ոչինչ չէ օգնում: Իսկ զարթոնացնել երեխային, որ
գնաց լուսամուտը ծածկել, նա չէ ուղարկ. վախում
է քնից զարթոնացնելը, որովհետեւ սիրտը դուրս է
որ նա հիւանդացած պիտի լինի. և ինչ կը լինի,
եթէ այդ բոլոր հանգամանքների վրա աւելանայ
և երեխայի անբախտը: Վերջապէս նա ոյժ գոր-
ծեց, ձեռք իր վրա դարձած չորերը, մի երկու
անգամ աշխատեց կանգնել—չեղաւ: Համարեա
ձեռքերի և ոտների վրա փոքրոք տալով մի կերպ

Թէ Կ. Պօլսի գրադէսները համար...

Ուրեմն այդ տեսակ ներդրումները դուրս գալու համար ուրիշ երբ չը կայ, եթէ ոչ հետեւեալ կօմպրօմիս անելու... Ձեր արտասանութիւնը, ճշմարիտ է որ ընտրելագոյն է, բայց մերն էլ լաւ է. չէ որ մեր տպարաններում ընկած, անձողներ, աղաւաղած հայոց տառագրութեամբ տըպված գրքերի ահագին քանակութիւնը մի կերպ պէտք է սաղացնենք...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՐԴՆԵՆ ԱՌԵՏՏՈՒՐ ԱՆԿԳՈՎԱՍՏՈՒՄ

Անցեալ երկու յօդուածներում ես մի փորձ փորձեցի որոշել այն շահերը չըջանը, որոնց ուղղակի կերպով շահափում է երկու տարուց ի վեր ծագած Անգլիոյկառնան ցորենի առևտուրը։ Եւ հարկաւոր է ասել, թէ ինչու ես ձեռնարկեցի մի այլաբան տեսութիւն անել։ Բաւ լիցի թէ դորանով ուղեցած լինի գրական արհեստականութիւն ընտանեկ ներկայ գրուածքիս առարկայի վրա ուշադրութիւն դարձնելու համար։ Վերջին ժամանակներում տեղական մամուլի մէջ այնքան յաճախակի երեցած ձայների դիմաց, որոնք ոչ մի տարակույս չեն թողնում, որ թէ քաղաքներում և թէ գետահովիտներում այդ առիթով մտքերը մի յայտնի աստիճանի յաղթանակներով մէջ են գտնուում։ Դորանով իսկ ընթերցող հասարակութեան ուշադրութիւնը դէպի ցորենի առևտուրը, որպէս նաև ուշադրութիւնը այն բոլոր անձանց, որոնց համար անտարբեր չեն հասարակաց շահերը—արդէն աստիճան իմ ներկայութեան։

Իմ նպատակը այլ էր. այն է՝ նախագրողաց ներ մտածանք այն անձանց, որոնք հասարակութեան և կառավարչական շրջանների մէջ ձայն ունեն, որ նորա չընկնեն ներքին և արտաքին գործողութիւնների մէջ, երբ քննադատուել կըսկան այն հարցերը, որոնք մօտիկ ապագայում բնական կերպով երևան կը դան ցորենի սկսող արտահանման պատճառով։ Եւ ասացի՝ մօտիկ ապագայում, բայց իսկապէս այդ հարցերը արդէն յուշված են, միայն թէ նրանք բաց հրապարակ դեռ չեն դուրս եկել։ Տեսէք թէ շատերի համար

մօտեցաւ լուսամուտին, ծածկեց կապերուի կտորով։ Դա մի այնպիսի մեծ աշխատանք էր նրա համար, որ ուժասպառ ընկած վերմակի վրա, կրկին և կրկին հաւաքեց ու լուցէ։ Մի ծանր թմրութիւն պատեց նրան, աչքերը վախկեցան։

Վաղուց մարդիկ անողորմաբէ էին անում փողոցներով, վաղուց թաղի կանաչը մի քանի անգամ կուժերով շուր էին բերել հորերից։ Մարիամը դեռ շատ երկար կը մնար նոյն գրութեան մէջ, չիմանալով որ իր սպասած ցերեկը շուտանց է բացվել, եթէ հարեան կիւր չը բաղխէր դուռը։ Այդ ձայնի վրա մերկացաւ քուրսու տակ խրված աղջկիկը, կանգնեց, դուռը մի քանի անգամ ծռուժեց, կարծես ուղում էր լաց լինել։ Ինքն երկուսն թուր հարբածի էր նման, սաստիկ տատանում էր. բայց էլ կարողացաւ դուռը բանալ և ներս թողնել նորիկին։ Էլ յետ դառնալ չը կարողացաւ նա. երեսի վրա յանկարծ փակեց դեռնին։ Մայրը ձայն մտած կիւր շտապեց վերցնել նըրան, նայեց դէմքին և սոսկաց։ Երեւան կապուել էր, աչքերը շուտ էին եկել, ատամները միմեանց էին կտել։ Նա ուշաթափուել էր։

—Աննա, դուք մայրը յուսահատ ձայնով և ծնկները ծնկելով. նա նոր խնայաւ թէ ինչ կայ։ —Մարգարիտ, ձիւն, ձիւն, Աստուծո սէրին ձիւն բեր...

Եւ նա փորձեց վերկենալ, բայց չը կարողացաւ։ Մարգարիտը նրան հանգստացրեց, ասելով թէ անձուխ հոտիցն է աղբայն ուշաթափուել և վաղեց ձիւն բերաւ, դուռ աղջկայ ծակաւորին։ Գէմքը ծածկիկեցաւ քրտնաբերով. բայց այդիկը դեռ

որքան քիչ նիւթ, քիչ տեղեկութիւն է պահանջվում, որ բոլոր դասակարգերի շահերը շոշափող մի այնքան կարևոր խնդրի մասին, որպիսին մեր նորաբողոք ցորենի արտահանումն է, արդէն մի վերջնական կարծիք կազմեն։ Գորենի արտահանումն պատճառով այդ բերքի գները թանկացան։ Եւ ասա արդէն դատողութիւնը, պատրաստ է, նոյնպէս էլ վերջնական եզրակացութիւնը։ Եւ ինչ է այդ եզրակացութիւնը—այն, որ մեր ցորենի արտահանումը պէտք է արգելել. թէ մեզք են քաղաքացիք, իսկ վաղը, ով է տեղեկ Աստուծո կամբից—մի սաստիկ երաշտութիւն և կամ մոլորեալ—և անս ժողովուրդը, խեղճ ժողովուրդը սովածարակ կը կոտորվի։ Եւ այդ էլ անտանելում է դատողութիւնը։ Իսկ եթէ, հարցնում ենք մենք, կարելի լինի այս կամ այն միջոցներով, հեշտ և յամենայն դէպս աւելի քիչ աւելի միջոցներով, քան նոյն առաջարկած ցորենային առևտրի արգելումը, ժողովուրդը, այո, նոյն խեղճ ժողովուրդը սովի ճարակից աղաւտ պահել—այն ժամանակ ինչ կատէր։

Մենք այս հարցը առաջարկեցինք ոչ թէ այս րօպէին նրան լուծելու համար, այլ միմիայն կըրկին ցոյց տալու համար, թէ որքան քիչ տեղեկութիւններով են բաւականանում շատերը—որոնց մէջ և հասարակաց օրգանների ներկայացուցիչները—որպէս զի դատաւիճիւններ կարգան, մի և նոյն ժամանակ դէմք ցոյց տալով իբր թէ այդ հարցերը նրանք կշռել են և ուսումնասիրել են։ Իսկ կառավարչական մարդկանց վրա հասարակաց կարծիքը աղբում է, որպէս և տեղի հասարակ մասկանացուների վրա։ Զանազ օրերն ճիշտ հասարակաց կարծիք կազմվելուն օգնել բազմակողմանի կերպով նրան ծանօթացնելով առարկայի բնասկզբներին հետ։

«Մշակի» նախընթաց համարների մինի մէջ կար արդէն արած մի համառօտութիւն Գիւղատնտեսական ընկերութեան անցեալ նոյնիքների 26-ի նիստում։ Իմ կարգացած գեկուցման այն մասի, որը վերաբերում էր ցորենի առևտրի սկզբնաւորութեան և արտահանման ցորենի քանակութեանը։ Մենք մեր կողմից կուզէինք ընթերցողի յիշողութեան մէջ վերականգնել յիշած մանրամասնութիւնները միմիայն ամենակարևորները՝ և «աւելցնել նրանց վրա ուրիշ տեղեկութիւններ, թէ ներկայ յօդուածների շարքը ամբողջութիւնից չը զրկելու համար և թէ նրանց կարևորութեան պատճառով։

Արտահանելու նպատակով ցորեն սկսում են գնել մեզ մօտ 1884 թվականի վերջին ամիսներում, բայց ցորենի արտահանութիւնը իսկապէս սկսում է մեզ մօտ միմիայն հետեւեալ տարեկ առաջին ամիսներից։ Փոթիից առաջին անգամ ցորեն ուղարկվեց արտահանման անցեալ տարեկ մարտ ամսին. Բաթումից՝ աւելի վաղ։ Բացի դրանից Բաթումից ցորեն արտահանելը շարունակվում է աւելի

անգագ էր. Մարգարիտը էլի ձիւն բերեց և դուռ անդադարեց դէմքին։ Մի քանի րօպէից յետոյ նուազածը շարժվեց, սկսեց հեկեկալ։

—Պրծել ես, պրծել ես, ասաց Մարգարիտը ուրախացած և քարշ տուեց տարաւ քուրսու մի անկիւնում պառկացրեց։ Աննան այժմ սկսեց ջերմի մէջ ընկած մարդու պէս դողալ, ցնցվել, ատամները միմեանց դարձել։ Նրա մայրը չը դիտէր ինչ անել, իսկ հակառակի պէս նորածին մանուկը էլի սկսեց ծալ։ Մարգարիտը Աննայի դուռը պինդ կապեց մի շորի կտորով, լաւ ծածկեց նրան և յայտնեց որ վտանգը անցել է։

—Էլ ով կը լինի ծարս, միմիայն էր մայրը դառնալով։

—Ճարդ Աստուած. այ խեղճ, պատասխանեց Մարգարիտը.—մեր ցանն է, պիտի քաշենք։

Նա էլ մի աղբաւ կիւն էր խեղճ լեղուն խեղճը կիւնանայ, ասում են մարդիկ։ Եւ դա ճիշտ է. Մարգարիտը կարողացաւ հանդստացնել Մարիամին։

Կարճ միջոց անցած՝ Մարգարիտը ասաց որ Բաթումից մարդ է եկել, գնում է նրանից տեղեկանալ Արիստակէսի մասին (այդպէս էր Մարիամի մարդի անունը)։ Մարգարիտը դուրս գնաց, բայց էլի չուտով յետ դառաւ։

—Ես մոռացայ, որ երեկվանից ոչինչ չես կերել, ասաց նա և տան մի անկիւնից բերաւ մի կտոր հաց, դուռ քուրսու վրա։

—Աչքերս կուրանան, Մարիամ, հէնց ցամաք հնց պիտի ուտես, այդ ցուերի մէջ...

—Անտեղ մի կտոր բոլի է եղել, պատասխանեց Մարիամը թուլ, անկենդան ձայնով և ձեռքը

անընդհատ կերպով քան փոթիից, որտեղ այդ առևտուրը մայիսից սկսած մինչև հոկտեմբերը գրեթէ բոլորովին դադարում է, միայն թէ նոյեմբերին նոյն առևտնապատից դուրս է բերվում մի անգամից և մի շոգենաւով 117 հազար պուդ, որ տեսնված բան էր. մի ամիս դադարից յետ, ներկայ 1886 թվականի սկզբից փոթիի ցորենի առևտուրը և ընդարձակվում է և անընդհատ շարունակվում։

Բաթումի և փոթիի ցորենի արտահանութեան մէջ այն դանադանութիւնը կայ, որ Բաթումից դուրս են բերում ցորեն և մեծ և մանաւանդ փոքր պարտեաններով, մինչդեռ փոթիից արտահանվածները միշտ մեծ պարտեաններ են ներկայացնում։ Այդ աւելի վերաբերում է այս տարվան, որովհետև անցեալ տարի փոթին Բաթումի չափի դեր չը խաղաց։ Եւ իրօք անցեալ 1885 թվականին արտահանված էր

Փոթիից՝ միմիայն. 193,530 պ. Բաթումից. 487,975 պ.

Իսկ ընդամենը. 681,595 պ. Բոլորովին հաշուակ ուղղութիւն ընդունեց դուրս առևտուրը, որը իր կենսաօրոնաւորին ընտրել էր ոչ թէ Բաթումի, այլ գրեթէ բացառապէս փոթիի մէջ։ Գորա մէջ կարելի է համոզվել նրանից, որ նոյն 1885 թվականին

Փոթին ուղարկել էր դարի. 258,733 պ. Բաթում միմիայն. 8,553 պ.

Իսկ ընդամենը արտահանված էր. 267,286 պ. Առանց թվանշաններ բերելու, ասեմք միայն այդքան, որ անցեալ տարի մեր ցորենը գլխաւորապէս արտահանվել էր Թիւրքիա, յետոյ Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա (Անգլիա) և յետոյ միայն Իտալիա, Աւստրիա, Գերմանիա, անշուշտ քանակութեամբ դնաց ցորեն նաև Իսպանիա, Բուլղարիա և Գոնաւատան։ Ինչ վերաբերում է գարուն, անցեալ տարի նա ուղարկվեց ամենից շատ Մեծ Բրիտանիա և յետոյ միայն Թիւրքիա, Իսպանիա և Գերմանիա։

Այսպէս էր դրծի գրութիւնը անցեալ 1885 թվականին, դրութիւն, որը կատարեալապէս փոխվեց սոյն 1886 թվականին։ Նրա որ փոթին ընդունեց առաջին տեղը ցորենի և գարու առևտրի մէջ. երկրորդ որ ցորենը սկսվեց ուղարկվել չորհրդակեր ամբարներում և ոչ թէ քսաններով և երրորդ, որ այս տարեկ արտահանութիւնը անհամեմատ մեծ էր, քան թէ անցեալ տարի էր, այն է՝ յոշնամից մինչև հոկտեմբերի վերջը՝

Փոթիից ուղարկվեց ցորեն. 2,315,000 պ. Բաթումից > > > 1,680,600 պ.

Ընդամենը. 3,995,600 պ.

Այդ մեզ տեղեց է տալիս ընդունել, որ մինչև հոկտեմբերի վերջը այս տարի ցորեն արտահանված կը լինի ոչ պակաս քան չինոյ միլիոն պուդ։ Դր. Ա. Արախանեանց

տարաւ դէպի չոր հացի կտորը։

Նա էլի միմիայն մնաց։ Ծանր ծանր ծանր էր չոր հացը, բերանն էր դնում և ուժով կու տալիս։ Դուռով դէն գցեց բոլիկ կտորը, որովհետև նա այնքան դառն էր, որ որքան աղով էր անում, դարձեալ չէր կարողանում ծամել։ Այդ ողորմելի նախաճաշիկից յետոյ նա ընկաւ իր տեղը, նախապէս համոզվելով որ Աննան քնած է։

Մտածողութիւնները էլի սկսեցին տանջել նրան։ Ինչ լուր կը բերէ Մարգարիտը։ Ծանկարծ նամակ ու փող բերել, ինչ կը լինի Բայց ոչ, այդպէս չէ, որովհետև այդ միտքն անելիս նրա սիրտը հանդարտ է, չէ բաբախում, երևի դուռն է որ ոչինչ չը կայ։ Իսկ եթէ յանկարծ մի վատ լուր... Նա հիւսնոյ լինի, կամ ով դիտէ թէ ինչ... Օ՜, Տէր Աստուած... Ո՛չ, նա այդ չի ասի, Մարգարիտը լաւ գիտէ իր դրութիւնը, կը լուէ, կը ծածկէ, եթէ այդպիսի բան էլ իմանայ։

Բայց այսպէս չէր Աննայի ծնունդը. Մարիամը լաւ յիշում է այդ տաք զարմանային օրը. արեւ լուսամուտով ընկած էր նրա կրծքի վրա, բակի ցանկապատի մօտ, մեծ հին տանձենու վրա ծռեղ խնկազարնելով պէս ծլլում էին, փշում էր մի տաք մեղմ քամի։ Իսկ Արիստակէսը այդ ժամանակ դրանը խօսում էր մի մարդու հետ։ Որքան ինքը հանդիստ էր այդ ժամանակ. եթէ աշխարհն էլ տանելիս աւերելին, կը համար ոչինչ էր, դիտել որ պաշտպան ունի, այդ մեղմ ձայնն էր, որ լսվում էր բակից. նա էր այդ պաշտպանը։ Նոյն երեկոյն—նա այդ չէ մոռացել—Արիստակէսը թէյ, չաքար ու միս բերաւ և նա իսկոյն երկու բաժակ թէյ խմեց։ Գետի Արիստակէսը եր-

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Այս շաբաթ հայոց խումբը դադարած էր Շէկսպիրով։ Նրկուշաբթի օրը տուեցին Համիլետ, իսկ հինգշաբթի, ի նպատակ այ. Արամեանի, «Արքայ Լիր»։ Գլխաւոր դերերը կատարում էր պ. Արամեան։ Այդ դերերը ներկայացնում էին միանգամայն միմեանց հակառակ անձնաւորութիւններ. առաջինը բոլոր ժամանակ մտածում է, չափում է, բայց գործելու ընդունակութիւն չունի, իսկ միւսը մի բան մտածել և այդ բանը անմիջապէս իրագործելը մէկ է անում։ Նոր չէ, որ պ. Արամեան կատարում է Համիլետ, նա այդ դերը խաղում է 1880 թվականից. այդքան ժամանակ խաղալով Համիլետ, պ. Արամեան կատարելագործել է նրան, և ամենապայտուն Համիլետը, ի հարկէ ի դիմաց պ. Արամեանի, մենք տեսնել ինչ ամաւաւ, իսկ այժման Համիլետը թէև շատ չէ զանազանվում այն ժամանակի Համիլետից, բայց, մեր կարծիքով, այն նոր փոփոխութիւնները, որ այժմ մտցրած են նրա մէջ, աւելի փառսում են դերարուեստական տպաւորութեանը։ Որինակ, երբոր գործողութեան յայտնի մնալօղը «Լինել թէ չը լինել»-ից յետոյ, որ կատարվեցաւ հիանալի կերպով, Համիլետը խօսում է Օթելլոյի հետ և համոզում է նըրան առանձնաւալ վաճառել. բաժանվելու ժամանակ նա կրկնում է վերջին անգամ «մօր կուտանոց»։ Պ. Արամեան այդ ասելուց յետոյ մօտ կէս րօպէ լուռ է, միայն ձեռքերով և աչքերով նրան հասկացնելով որ Օթելլոն հեռանայ, այնուհետև էլ նորից մի երեք չորս անգամ նա կրկնում է «մօր, մօր կուտանոց»։ Մի և նոյն բանը կրկնվում է մի և նոյն դործողութեան մի ուրիշ պատկերում, այն է մօր հետ խօսակցութիւն ունենալուց յետոյ, միայն «մօր կուտանոց»-ի տեղ ասում է. «միտ բարեաւ, միտ բարեաւ, միտ բարեաւ...»։

«Լիր» մէջ պ. Արամեան ողբից մինչև դուլի թագաւոր էր։ Միայն նկարիչ լինելով այն էլ նուրբ ճաշակով կարելի է այնպիսի գրեթէ ասեղծիկ, ինչպիսին ունէր պ. Արամեան Այդ յիշաւի կատարեալ էր «Համիլետ» և «Լիր» մասին մանրամասնօրէն խօսելը առ այժմ թողնում ենք. այդ մասին խօսելը, ինչպէս մի անգամ էլ խոստացել էինք, թողնում ենք մի յարմար ժամանակի։ Միայն առ այժմ Լիր—Արամեանի մասին այդքանը կանկնք, որ աչքի էր ընկնում Գօնէրիկայի անիծելը, անապատում էր զգարի հետ խօսելը, չորրորդ գործողութեան մէջ խնկազարնելը և այլն։

Գառնանք միւս մանապեղծներին։ «Համիլետ» մէջ Օթելլոյի դերը կատարում էր տ. Գառնիկ։ Տիկինը շատ չնորձալի կերպով խաղաց, չը նայած որ, ինչպէս խնայվեցաւ, իրան շատ սկաւ է եղել զգուս։ Զորորդ գործողութեան մէջ երգելիս տիկինը ցոյց տուեց, որ ունի բաւական դուրեկան

կար խօսում էր իր մի ընկերի հետ, որ եկել էր աչքաւաւսի։ Ինչ էին խօսում նրանք, Մարիամը չէ յիշում, բայց չէ մոռացել, որ շատ քաղցր էր այդ խօսակցութիւնը։

—Այո, այս օրը այն օրվայ ընկերը չէ...

Մարիամը շատ հեռու տարան Մարիամին։ Յիշողութիւնները արագ յաղորդելով միմեանց, ի վերջոյ դրին նրա առաջ անհոգ մանկութեան պատկերներ։ Նա յիշեց իր հանգուցեալ ծնողներին, որոնց երկար չէր տեսել յիշեց բազմամիսամ քուտան, որի հացով էր մեծացել և որ օճիկ տեղ գնելով իր բազմաթիւ տարիները, անխնայ աշխատում էր տան համար։ Զրկիլ էր Մանաս քուտան Նրկու վտիտ էշերի հետ նա ամեն օր մի քանի անգամ չափաւոր էր Դուշին մի ծայրից մինչև միւսը, երկուսերը միշտ ցեխոտ, յոգնած դալիս էր տուն, քիչ հանգստանում էր, մի կտոր ցամաք հաց էր ուտում ուրախ ուրախ, ծիծաղեցնում էր ամենքին իր համարներով։ Ինչէր չէր ասում լուսահոգի ծերուհին։ Ամենից շատ պաշտում էր իր հայրական օ-շախի։ Մի անգամ բոլորովին անգործ էր մնացել և ոչ ոք փող չէր տալիս որ երկու աւանակ առնէ, այդ ժամանակ դրացի Անդրէասը Մանաս քուտակահովից գցեց տունը իրան ծախել։ Այդ խօսքերը չը մոռացաւ ծերուհին։ Մի ամբողջ շաբաթ չարացած էր, հազար անգամ կրկնել էր այդ խօսքերը. «Հու՛նը որ կայ, շուտն էլ իր բոյնի վրա տաքացած է լինում. իսկ մանրը, Աստուծո տուած խնքը զլնում պահող մարդը...»։ Քիչ մը տածելուց յետոյ նա պատասխանում էր այդ հարցին. «Կէ, չեմ կարող, թող ոսկորներս դուրս դան իմ հօր թողած օթեանից»։

մար, կազմակերպում մի շարք գրականական երեկո-
ներ, որոնց նպատակն էր ծանօթացնել ուսանողի-
ներին մի քանի հեղինակների և նույն գրականության
հետ: Այժմ գրականական երեկոների հարցը կը-
կին երևան եկաւ: Գրականութիւն կայ այս տա-
րի տալ մի շարք գրականական երեկոյներ, մի
փոքր ընդարձակելով ծրագիրը, այսինքն բացի
գրականութիւնից, խօսել նմանապէս ընտանի գի-
տութիւնից և առողջապահութիւնից: Վերջին ձե-
ղի համար մտադիր են հրատարակել մի մասնագէտ
բաժնի: Խմբի կազմակերպութեանը նայած, այժ-
մանից կարելի է աջողութիւն գուշակել: Յանկա-
նում ենք կատարեալ աջողութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋԵՆԵՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻԹՈՐ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Երկրան զինուորական օրինադիմներն և պատե-
րազմական բիւզետի չըջան է եւրօպական այն
պետութիւնների համար, որոնք մի որ և է ցաւ
ուսնան արտաքին քաղաքականութեան մէջ: Հաս-
կանալի է ուրեմն թէ ինչպէս զինուորական պատե-
րազմական խնդիրը համարեալ մի և նոյն միջոցին
դրոյեցնում է Գերմանիան, Ֆրանսիան, Աւստրո-
ւնգարիան, և ուրիշ մի քանի պետութիւններ:
Այն շարժումը, որը սկսած է վաղուց արդէն
Գերմանիայում կառավարութեան պատրաստած
զինուորական օրինագծի պատճառով,—արդէն հա-
սել է իր գործնական դրոյեցնումը,—որովհետեւ օ-
րինագծի ճշմութիւնը արդէն սկսած է գերմա-
նական բեյաւստացում: Օրինագծի ճշմութիւնը բնիկ-
վեցաւ պատերազմական միջոցների ճառով: Պատե-
րազմական միջոցները ասաց այն, ինչ որ ասում է
ընդհանրապէս կառավարութիւնը,—կրկին անորոշ
մտքեր, կրկին վտանգներ արտաքուստ: Մենք
ասում ենք մի այնպիսի ժամանակում, ասաց
միջոցները, երբ մեծ յոյս է կարելի դնել խաղա-
ղութեան վրա. այն պատճառով մենք չենք կա-
րող հանգիստ մնալ, երբ տեսնում ենք որ մեր
հարեանները աւելի լաւ են զինավորվում: Կառա-
վարութեան պահանջը անհետաձգելի է և պէտք է
աշխատել շուտով վերջացնել օրինագծի ճշմութիւ-
նը: Եւ զիտեմ, որ խնդրի ֆինանսական կողմը
լինի, թէ էս կը լինեմ ստիպված որոնելու հա-
կաւոր դրամական միջոցները (ընդհանուր ծիծաղ):
Եթէ զօրքի աւելացնելու խնդիրը կը լուծվի դա-
կանապէս, այն ժամանակ փող կարելի կը լինի
ձեռք բերել զանազան տուրքերի միջոցով: Իսկ
ինչ վերաբերում է եօթնամեակի խնդրին, պէտք
է ասել, որ կառավարութիւնը այդ համարում է
ամենակարգ ժամանակակիցը, որի ընթացքում
կարելի է զարգացնել պատերազմական ոյժերը...:
Պատերազմական միջոցներից յետոյ Ռիստեր մի
երկար ճառ խօսեց: Ռիստեր սկզբում նկատեց,
որ կառավարութիւնը միշտ մի և նոյն պատճառ-
ներն է բերում, երբ առաջարկում է զօրքի թիւը
աւելացնել: Ոչինչ հիմք չը կայ անպատճառ շու-
տով վերջացնելու օրինագծի ճշմութիւնը, եթէ
ներկայումս ոչինչ պատերազմական վտանգ չը
կայ: Հոռետուր ամենապարզապէս կէտերում կառա-
վարութեան հակառակ մտքեր յայտնեց: Մի աղ-
գի պատերազմական ոյժերը և նրա զօրքի կնի-
մակերպութիւնը խաղաղ ժամանակ—բոլորովին
տարբեր խնդիրներ են, ասաց Ռիստեր: Գրանից
յետոյ Ռիստեր խօսեց թէ զինուորականութեան, թէ
զինուորների ծառայութեան և թէ եօթնամեակի
մասին: Հոռետուր կարծում է, որ իւրաքանչիւր
տարի պէտք է հաստատել զօրքի թիւը և շատ
շատ, կարելի է միայն երկու տարով լրացութիւն
տալ կառավարութիւնը: Կառավարչական կու-
սակցութիւնը խոյս էր տալիս բացատրութիւններ
տալու, և ինքը պատերազմական միջոցները
յայտնեց, որ բոլոր մանրամասնութիւնները կը
պարզվեն յանձնաժողովի կողմից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՍՏ

—Իւրանդական հարցի ներկայ կնճռոտ դրու-
թիւնը և Սալըրըրի կարծիքները բուն զեբը
մեծ ազդեց է գցել Լօրիստի քաղաքական շրջան-
ներում: Գաղափարներ կուսակցութիւնը ողկողված
զործում է: Անդալար տեղի են ունենում միտինգ-
ներ: Իսկ պահպանողական կուսակցութիւնը զար-
մացում է այն տուն անտարբերութիւնը, որով
աղտոտմիս հերձուածողները վերաբերվում են դե-

պի Սալըրըրի կարծիքներ: Թէ Հարտինգտոն, թէ
Չեմբերլէն համարեալ չեն մասնակցում պահպանո-
ղական միջնորդութեան սկսած գործունէու-
թեանը:

—Յունաց թագաժառանգի չափահաս լինելու
պատճառով, Աթէնքում տեղի ունեցան փառաւոր
և չքեղ հանդէսներ:

—Եւրօպական լրագիրները լուր են տարածում,
որ ռուսաց կառավարութիւնը ուզում է 75 միլիոն
նոր փոխառութիւն անել:

—Չինուորական օրինադիմը ընկնելու համար,
գերմանական բեյաւստացի կազմած յանձնաժողո-
վի անդամները 16 ընդդիմադրական են, իսկ
12 օրինագծի կողմնակից: Դաւադար կենտրո-
նի կուսակցութեանն է պատկանում:

—Բօլզարական գահի թեկնածուներն թիւը մե-
կու է աւելացաւ. խօսք կայ և Հօլլանդի-Գլիւկա-
բուրգի դքսի մասին, որը ծնվել է 1825 թիւն և
Դանիայի զինուորական ծառայութեան մէջ գննե-
րալի աստիճան ունի:

—Հոռօնց գրում են, որ պապը աշխատում է
դիպլոմատիական յարաբերութիւններ հաստատել
վատիկանի և բրիտանական կառավարութեան
մէջ:

—Ղիզերլանդիայի թագաւոր Վիլհելմ III ա-
ռաջարկեց ռուսաց թագաւոր Նիկոլային, իբրեւ ըն-
ծայ այն տունը, որի մէջ բնակվում էր ռուսաց
Պետրոս Մեծ կայսրը, որը գտնվում է Սառալի
քաղաքում: Այն անկողն, որտեղ բնակվում էր
Պետրոս Մեծը մինչև այժմ էլ պահպանված է իր
նախկին դրոյեցնումը: Տնակը շինված է փայտից,
վերջերում, որպէս զի այն անկողն չաւերվի, նրա
վրայից շինված է մի մեծ քարեայ տուն, իբրեւ
պատուպարան:

—Իտալական պատգամաւորների ժողովին ներ-
կայացրած է մի օրինադիմ, որով առաջարկվում է
25 միլիոն յառակցանել զօրքի և նաւատորմի ան-
սպասելի ծախսերի համար:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 դեկտեմբեր: «Прав. Вѣст.»-ի
այսօրուայ համարում տպված է «Բօլզարական»
անցքերը, որոնք ռուսաց հասարակութեան և
ռուս մամուլի մէջ յարուցին միանգամայն հաս-
կանալի յուզումներ, մի և նոյն ժամանակ պատճառ
տուեցին մեր լրագիրներին ընկնելու Ռուսաստանի
և օտար պետութիւնների յարաբերութիւնները: Չը
բաւականանալով յայտնի և անկասկածելի փաս-
տերի գնահատութեամբ, մի քանի լրագիրներ,
վիշակ յարաբերութիւնները լուսաբանելու համար,
գրում են ենթադրութիւններ, որի պատճառով
նույն դատողութիւնները, որոնք անհատաւ հիմք
ունեն, ոչ թէ միայն հեռու են անկողնապահու-
թիւնից, առանց որի անկարելի է փոքր ի շատ
ձեռք կրկնել հասկանալ քաղաքական հարցերը,—
այլ և երբեմն միանգամայն իրականութեան հա-
կաւոր են ընթանում: Այդպիսի բնավորութիւն
ունեն, ի միջի այլոց, մի քանի յօդուածներ, ո-
րոնք լոյս տեսան վերջին ժամանակներս, և որոնք
նուիրված են գերմանական քաղաքականութեանը:
Այդ յօդուածների մէջ ռուս հասարակութեանը
ներշնչվում է այն միտքը, որ այն դժուարութիւն-
ները, որոնք արգելում են բոլզարական հարցի
ցանկալի վարձանիւն, առաջ են գալիս Գերմա-
նիայի անհամբաւ զործունէութիւնից, և որը
այդ պատճառով ներկայացվում է իբրեւ վտան-
գաւոր թշնամի Ռուսաստանին, և չարախնդիր տ-
րա արժանապատուութեան և ապահովութեան Չե-
մբերլէն չը ջաշկ աշտըրմակ անհիմն դատողու-
թիւնների համար: Ռուսաստանը Գերմանիայի հետ,
իբրեւ իր ամբողջական հարեանի հետ, կապված է
բաղմանի կենսական շահերով, որոնց չնորհի-
րելու պետութիւնների յարաբերութիւնները վա-
ղուց ամբապնդած են և մի քանի անգամ էլ ա-
զատվել են փորձանքներից: Այդպիսի յարաբերու-
թիւնները հաւասարաչափ կերպով կարելի են եր-
կու պետութիւնների աջողութեան համար: Այդ
բանը խոստովանում են երկու երկիրների կառա-
վարութիւնները և չէ կարելի չը ցանկանալ, որ
այդ յարաբերութիւնները երկար տարիներ տե-
նան: Հաստատապէս մտադրված լինելով առաջիկայ նը-
ման կարեւոր յարգանքով վերաբերվելու դէպի
բուն,—գերմանական շահերը, կայսերական կառա-
վարութիւնը կատարեալ հիմք ունի համոզված լի-
նելու, որ Գերմանիան էլ իր կողմից յետ կը կենայ
այնպիսի գործողութիւններից, որոնք կարող կը
լինեն չօչախել թէ Ռուսաստանի արժանապատու-
թիւնը, և թէ նրա այնպիսի շահերը, որոնք առ-
աջ են եկել մեր դէպի մեր արեւելեան հաւասար-
ակցները ունեցած պատմական յարաբերութիւննե-
րից, և որ բոլոր աղբիւրները գործ կը դնվի
ընդհանուր խաղաղութեան պահպանութեան հա-
մար, որը շատ կարեւոր է Եւրօպայի համար, և ո-
րը հաւասարաչափ կերպով Ռուսաց կայսրի և
ռուս ժողովրդի խորին ցանկութեան տալովան
է: Որքան բարդ և նուրբ են քաղաքական հանդա-

մանքները, այնքան էլ աւելի հեռատեսութիւն և
ստանաւորութիւն է հարկաւոր նույն ընկնելու ժա-
մանակ, ուրեմն և այնքան էլ նուազ կերպով կա-
րելի է արդարացնել այն դատողութիւնների թե-
րութիւնը և շտապողութիւնը, որը արտայայտ-
վում է մամուլի միջոցով այն մամուլի, որը բա-
ւական նշանակութիւն ունի միջազգային յարա-
բերութիւնների գործի մէջ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 3 դեկտեմբեր: Սենատի վճառ-
վին ղեկարարման ընտրութեանը ենթարկված
է հետեւեալ հարցը. կարող են արեւելք հաշտարար
դատարաններ մեղադրանք անարեւելք համարել
այն դէպքերում, երբ մեղադրողը մի պաշտօնա-
կան տար անձն է:

ՍՕՖԻԱ, 3 դեկտեմբեր: Գաղթան-էֆէնդին մի
յայտագրով պահանջեց, որ խախտվին այս-
տեղ հրատարակվող լրագիրները, ըստ որում
նրանք իշխան Ալեքսանդրի երկրորդ անգամ ըն-
տրվելու կողմն են և դիմադրում են Միսթրիայի
իշխանի թեկնածութեանը:

ՄՕՍԿՎԱ, 4 դեկտեմբեր: Դատաստանական
պալատը, երդուաւնների մասնակցութեամբ, քըն-
նեց Ղիզերլանդիայի նահանգի, Սիւմմուսի երդու-
աւ դատարանների կաշառելու գործը: Մեղադր-

վում են մէկ մէջանին և վեց դիւղացի: Դատապար-
տված են մէկը զրկվել կարողութեան իրաւունք-
ներից և բանտարկվել կաշառելու բաժնում
երկու տարի և 9 ամիս, իսկ միւսները ենթար-
կվել դրամական տուգանքի:

ԼՕՆԻՆ, 4 դեկտեմբեր: Անգլիական բանկը
բարձրացրեց դիսկոնտո 4-ից մինչև 5 1/2%:

ԼՕՆԻՆ, 4 դեկտեմբեր: Մտադրութիւն կայ
Եւրպոստը գրաւող զօրքի թիւը պակասացնել և
հասցնել հինգ բաւալիսին:

ԿՕՊԵՆՀԱՊԵՆ, 4 դեկտեմբեր: Այն լրագրա-
կան լուրերը, որոնք հաղորդված են Դանիայի
զօրքի աւելացնելու և օտար պետութիւնների ա-
ջակցութեամբ ամբողջ կառուցանելու մասին,
—անհիմն են: Ցանկութիւն կայ միայն մի քանի
ամբողջ կառուցանելու, և որովհետեւ դրա հա-
մար հարկաւոր է 39 միլիոն, մի գումարը որ բա-
ժանվի հինգ կամ եօթն տարեկան վրա, ուստի այդ
մտադրված ձեռնարկութիւնը չէ կարելի համարել
պատերազմի պատրաստութիւն:

Խաղաղ-հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԹՈՐԻՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԵՂԲԱՐՑ ԾՕՎԵՆՕՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

(Միօնի փողոց, քարվանսարայ Անանովի)

ՎԱՃԱՌՈՒՄ Է Խաղաղատունակներ I և II փոխառութեան և ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է
50 կոպ. հատը: 10 տոմսակից աւելին 45-կոպ. ՀԱՏԸ. 20 տոմսակից աւելին 40 կոպ.
ՀԱՏԸ: 1—7 (ե. շ.)

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES

PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳՆԱՑՈՒԹԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

(ՄԵՍԱՃԼՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Հինգշաբթի, 11 դեկտեմբեր, ԲԱԹՈՒՄԻՅ զուրա կը գնայ շոգհաւ PEI-HO
(ՊԵՅ-ՇՕ) նաւապետ PELLISSIER (ՊԵԼԻՍԻԵ) դէպի Կ. Պօլս և Զիւռիխ և յարակցելով
Եւֆրատ, Պօրտ-Սայդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգհաւերի հետ:

Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄԻ և ԲԱՆԻՍԻ պ. պ. ԲՈՒՐ-
ԿԱԼԻՒԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒ ԳԵՌԳ ՀԵՋՈՐԵԱՆ ՀԵՋՈՐԵԱՆԻ:
3—3

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

1887 թ.

Սեփականութիւն սրբ. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի, Գինն է 3 շրշ. Տպագրութիւն Գ.
Պաղտատեան (Արամեան)

1887 տարւոյն (Ընդարձակ Որացոյցն հրատարակուցաւ նախորդ տարիների շատ աւելի ձևի.

Բ Ո Վ Ա Ն Գ Ւ Վ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բաց ի բուն Որացոյցն կը պարունակէ հետեւեալ վիճակագրական կարեւոր գիտելիքներն, Օսմա-
նեան կայսրութիւն,—Ալազանի կայսերական պալատան,—Երանաք Բ. Դրան,—Մեծ պաշտօնա-
տարը Մայրաքաղաքի,—Հրամանատարը բանակաց,—Կուսակալը նահանգաց,—Պաշտօնաւարը և
ազգապետը,—Օսմանեան դեսպանը,—Գեսպանը օտար տէրութեանց,—Վիճակագրութիւն Օսմ. կա-
ռավարութեան,—Հայազգի աստիճանաւորը և պաշտօնեայք Օսմ. տէրութեան,—Հայապետութիւն
Հայոց,—Եւրոպական վարչութիւն,—Ցանձաժողովը,—Պաշտօնեայք Պատ-
րիարքարանի,—Առաջնորդութիւնը թուրքիոյ, թեմը նույն և տունը,—Հոլութիւնը,—Մայրաքաղաք
թուրքիոյ,—Թաղապետը Կ. Պօլսոյ,—Համագումար թաղապետի և կրթական հաստա-
տութիւնը,—Առաջնորդութիւնը ՚ի Ռուսաստան և այլն,—Մայրաքաղաք ՚ի Ռուսաստան և այլն,—
Կայսերական գերագոյն Բուլոյի,—Հայազգի աստիճանաւորը և պաշտօնեայք Ռուսական, Պարս-
կական և այլ և այլ տէրութեանց,—Հոլութիւնը Հայ Հասարակութիւն,—Բողոքական Հայ Հասա-
րակութիւն,—Դատաւորը պետական ռուսականարանի,—Բժիշկը քաղաքական ու զինուորական, —Փաս-
տաւարը,—Արտեստագէտը,—Լրագիրը,—Հեռագրութիւնը թուրքիոյ և միջազգային,—Եւրոպա-
կան միջազգային թղթատարութիւնը,—Եւրոպական Դատականութիւնը,—Ցանձաքային թղթատարու-
թիւն Ասիական թուրքիոյ,—Ժամանակացոյց սուրհանդակաց Օսմ. միջազգային թղթատարութեան,
—Ցուցակը երթևեկութեանց չղցնաւուց այլ և այլ ընկերութեանց,—Պատկեր 1887 թուին,—Վի-
ճակագրութիւնը օտար տէրութեանց,—Ազգը,—Մանուցումը:

Երկու տարւոյն (Ընդարձակ Որացոյցն) ընդարձակութիւնը 320 երեսներու բարձրանալով հան-
դերձ 3 զլի գինն անխօսիս պահուած է:

Կնիդրոնատեղին է Յակոբեան Իսան թիւ 13. Տպագրական գրատունն:

1—3

ԿՕՖԻ ՄՕԿԿՕ

(Պ. 4907) Ս. ՄԻՈՒ և ԸՆԿ. 38—50 (2)

ԳԱՅԱՆՆԱՆ ԱՆՈՒՄԱՐԱՆՈՒԹ ԵՒ ԱՆՈՒՄ
ՄԻ ՕՐԻՈՐԳ ԳՆԱԿԱՆՈՒԹ Է ՄԱՍ-
ՆԱԲՈՐ ՏՆԵՐՈՒՄ ԴԱՍԵՐ ՏԱՆ: Հասցէի
մասին դիմել "ՄՇԱԿԻ" խմբագրու-
թեանը: 2—12

ԽԱՐԿՈՎ ԲԻՐԵԱՅԱ ՓՈՂՈՑՈՒՄ ԲՈՒՖԻ ԾՏԵԼՈՒՄ
ՆՕՄԵՐՆԵՐ ԵՒ ԲԵՍՏՕՐԱՆԸ
ՆՈՐԻՑ ԵՔԵՂ, ԿԵՐՊՈՎ, ԶԱՐԴԱՐԱՎԱԾ ԵՆ:

Նօմբերը 75 կօպ.—5 բուրբ: Ամենայն յարմարութիւն: Խոհանոցը Մօսկվայի
Էրմիտաժ Բեստօրանի հմուտ խոհարարի ձեռքումն է: Բեստօրանում կայ Օրքեստրիօն-
Մօսկա:

Տան օրից աւելի մնացողներին անում են զիջում (բացի տնայաձեռնների միջո-
ցին): Նօմբերի զինելը շատ մատչելի են:
Kharkow. Hôtel Rouff.

10—10